# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81, Ֆաքս 0285-3-30-22

N 36
*02 փետրվար 2017թ.*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեզ ենք ուղարկում Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2017թ հունվարի 27-ի թիվ 1 արտահերթ նիստի 1-7 համարանիշներով որոշումները:

Առդիր- 21 էջ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ N 1202
«7» 02 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, www.qajaran@mail.am

# ՈՐՈՇՈՒՄ N 1-Ա

27 հունվարի 2017թվականի

ՔԱՋԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ- 10 , ձեռնպահ – չկա դեմ-չկա, *ՈՐՈՇՈՒՄ Է*

.Հաստատել Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2017թ հունվարի 27-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը /Համայնքի ղեկավարի նախաձեռնություն/

1. Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի թիվ 52 -Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /Զեկ. Ա Մարտիրոսյան/

2. Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի թիվ 58 -Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /Զեկ. Վ Ազարյան/

3. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին /Զեկ. Վ Ազարյան/

4.Պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին / Վ Ազարյան/

5.Քաջարան քաղաքում թափառող շների վնասազերծման մասին /Զեկ. Վ Ազարյան/.

6.Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի թիվ 50-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

| | |
|---|---|
| Աթայան Մերուժան- Կողմ | Գաբրիելյան Գոռ- Կողմ |
| Անդրեասյան Արմեն Կողմ | Համբարձումյան Կարեն Կողմ |
| Առաքելյան Արայիկ- Կողմ | Հայրապետյան Վարուժան Կողմ |
| Առաքելյան Սասուն- Կողմ | Ստեփանյան Դերենիկ Կողմ |
| Բաղալյան Արթուր- Կողմ | Ստեփանյան Նարեկ Կողմ |

Համայնքի ղեկավար Մ Փարամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, www.qajaran@mail.am

# ՈՐՈՇՈՒՄ N 2 -Ն

27 հունվարի 2017թվականի

## ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18)-րդ և 19)-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման VII մասի 49-րդ կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության կողմ-10 , դեմ-չկա, ձեռնպահ-չկա արդյունքներով, *ՈՐՈՇՈՒՄ Է.-*

1. Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի թիվ 52 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելվածի:/հավելված 1/

| | |
|---|---|
| Աթայան Մերուժան- Կողմ | Գաբրիելյան Գոռ- Կողմ |
| Անդրեասյան Արմեն Կողմ | Համբարձումյան Կարեն Կողմ |
| Առաքելյան Արայիկ- Կողմ | Հայրապետյան Վարուժան Կողմ |
| Առաքելյան Սասուն- Կողմ | Ստեփանյան Դերենիկ Կողմ |
| Բաղալյան Արթուր- Կողմ | Ստեփանյան Նարեկ Կողմ |

Համայնքի ղեկավար Մ Փարամազյան

2017թ հունվարի 30 Քաջարան

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքային
Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 27 -ի թիվ 2-Ն որոշման

# ՔԱՋԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան քաղաքային համայնքի տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1.Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ.սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,վերականգնման , ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցերի /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

*4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.*

*5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմնած բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ/սահմանել արտոնություն/.*

6) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

*6)[1] Համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնք սեփականությունը հանդիսացող միջոցառումների սրահների օրավարձը թաղման ծիսակատարությունների և այլ միջոցառումների համար սահմանել*

*1/Բակունցի 5 ա հասցեում գտնվող <<Լեռնագործների արարողատուն>> ՄԴԸ*

*40000դրամ, այլ 50000դրամ*

*2/Գայի 2 հասցեում 30000դրամ, այլ 40000դրամ*

***3/Տերյան փողոց 40000դրամ,այլ 50000դրամ***

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրալեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամհեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում

տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, *օրացույցային տարվա համար քսան հազար դրամ՝ նախկին տաս հազար դրամի փոխարեն.*

8) Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

9) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000/ութ հազար/դրամ .

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 /տասերկու հազար/դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 16000 /տասնվեց հազար/ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000/ քսաներկու հազար/ դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 35000/երեսունհինգ հազար/դրամ.

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 70000 /յոթանասուն հազար/դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000/ութ հազար/դրամ .

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 /տասերկու հազար/դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 16000 /տասնվեց հազար/ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝22000/ քսաներկու հազար/ դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 35000/երեսունհինգ հազար/դրամ.

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 70000 /յոթանասուն հազար/դրամ.

10) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ մեկ քառակուսի մետրի համար.

11) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/, ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25.000/քսանհինգ հազար/ դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000/հիսուն հազար/ դրամ.

գ. բաղնիքների /սաունաների/ համար՝ 200.000/երկու հարյուր հազար/դրամ.

դ. խաղատների համար՝ 1.000.000 /մեկ միլիոն/ դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 500.000/հիսուն հազար/ դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 150.000 /հարյուր հիսուն հազար/դրամ.

12) Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. Հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3.000 /երեք հազար/դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7.000/յոթ հազար/դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի 11.000/տասնմեկ հազար/դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16.000/տասնվեց հազար/դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000/քսանհինգ հազար/ դրամ.

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000/հիսուն հազար/դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 /հազար/դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000/երկու հազար/դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000/չորս հազար/դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000/ութ հազար/դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսիմետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ.

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 / քսանհինգ հազար/ դրամ.

13) Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու *հինգ հազար դրամ նախկին զրո դրամի փոխարեն.* թույլտվության համար, օրացուցային տարվա համար

14) Ավագանու կողմից սահմանված կարգի ու պայմանների համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների

տարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *երկու հազար դրամ՝ նախկին հազար դրամի փոխարեն*

բ. թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *երեք հազար հինգ հարյուր դրամ նախկին երկու հազար հինգ հարյուր դրամի փոխարեն*

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտքին գովազդի համար՝ *հազար հինգ հարյուր դրամ՝ նախկին յոթ հարյուր դրամի փոխարեն*

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով:

***15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ -- նախկին 50000/հիսուն հազար/ դրամ***

16) Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենային համար՝ տաս հազար դրամ.

17)Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար, օրացույցային տարվա համար ՝ ***500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ——նախկին 50.000/հիսուն հազար/ դրամի փոխարեն***

18) Համայնքի վարչական տարածքում գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ .

1-. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ.

*2.* Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ, կարող են հաշվարկվել 0.5 կամ 0.5 գործակցի կիրառմամբ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

*3.* Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում՝ համայնքի ավագանու որոշմամբ, կարող են սահմանվել 1.5 **անգամ ավելի**, բացառությամբ 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի:

*4.* Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, **2-րդ և 3-րդ կ**ետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության **կառավարության** սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային **համայնքներում** հաշվարկվում է՝ 0.3, *քաղաքային այլ բնակավայրերում՝ 1.0-ից 3.0:*

Տեղական **վճարների դրույքաչափերը**

1Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

*1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.*

*2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.*

*3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.*

*4) Համայնքի սեփականության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.*

*5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.*

*6) Համայնքի վարչական տարածքում տոնավաճառների /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.*

*7) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.*

*8) Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է << է <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.*

*9) Կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորող ոլորտում սակագների սահմանման դեպքերի.*

*10) Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես՝ ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.*

*11) Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն <<Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միության մասին>>*

*Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.*

*12) Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.*

*13) Համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.*

*14) Համայնքի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների /երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն/ ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.*

*15) Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.*

*16) Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.*

*17) Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում /բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների / ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ <<Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից.*

18) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար 1.000/մեկ հազար/ դրամ փոխհատուցման վճար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** Մ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, www.qajaran@mail.am

# ՈՐՈՇՈՒՄ N 3 -Ն

27 հունվարի 2017թվականի

## ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 58-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառվարման մասին„ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Իրավական ակտերի մասին„ Հայաստանի հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով `կողմ- 10 , դեմ-չկա, ձեռնպահ-չկա, *ՈՐՈՇՈՒՄ Է*

Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի « Քաջարան քաղաքային համայնքի 2017թ բյուջեն հաստատելու մասին թիվ 58-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ համաձայն հատվածի /1,2,3,6/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը :

| | |
|---|---|
| Աթայան Մերուժան- կողմ | Գաբրիելյան Գոռ- Կողմ |
| Անդրեասյան Արմեն Կողմ | Համբարձումյան Կարեն Կողմ |
| Առաքելյան Արայիկ- Կողմ | Հայրապետյան Վարուժան Կողմ |
| Առաքելյան Սասուն- Կողմ | Ստեփանյան Դերենիկ Կողմ |
| Բաղդյան Արթուր- Կողմ | Ստեփանյան Նարեկ Կողմ |

**Համայնքի ղեկավար** Մ Փարամազյան

**2017թ հունվարի 30 Քաջարան**

# ՀԱՏՎԱԾ 1
## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** (տող 1100 + տող 1200+տող 1300) | | 1800.0 | 1800.0 | 0 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 7400 | 1800.0 | 1800.0 | 0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ | 7415 | 1800.0 | 1800.0 | X |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 1800.0 | 1800.0 | X |

## ՀԱՍՎԱԾ 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| Տողի NN | *Բա-ժին* | *Խում բ* | *Դա ս* | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | *X* | *X* | *X* | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | 5442.787 | 5321.191 | *121.596* |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+ տող2180) | 3931.031 | 3931.031 | 0.000 |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | 3931.031 | 3931.031 | 0.000 |
| | | | | որից՝ | | | |
| | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 3931.031 | 3931.031 | |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+ տող2980) | 121.596 | 0.000 | 121.596 |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | 121.596 | 0.000 | 121.596 |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 121.596 | | 121.596 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | 1390.160 | 1390.160 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | 1390.160 | 1390.160 | |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 1390.160 | 1390.160 | |

# ՀԱՏՎԱԾ 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** (տող4050+տող5000+տող 6000) | | 5442.787 | 5321.191 | 121.596 |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝** (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700) | x | 5321.191 | 5321.191 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող4110+տող4120+տող4130) | x | 3931.031 | 3931.031 | X |
| | այդ թվում՝ | | | | |
| 4110 | *ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ* (տող4111+տող4112+ տող4114) | x | 3931.031 | 3931.031 | X |
| | որից՝ | | | | |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 3931.031 | 3931.031 | X |
| 4700 | *1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ* (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770) | x | 1390.160 | 1390.160 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ* (տող4771) | x | 1390.160 | 1390.160 | |
| | որից՝ | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | 1390.160 | 1390.160 | |
| 5000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** (տող5100+տող5200+տող5300+տող5400) | x | 121.596 | X | 121.596 |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | 121.596 | X | 121.596 |
| 5120 | *ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ* (տող5121+ տող5122+տող5123) | x | 121.596 | X | 121.596 |
| | որից՝ | | | | |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 121.596 | X | 121.596 |

# ՀԱՏՎԱԾ 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)

(հազար դրամով)

| Տողի NN | | Ընդամենը (ս.4+ս.5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | 3642.787 | 3521.191 | 121.596 |

# ՀԱՏՎԱԾ 5

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 8010 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8200), (տող 8000 հակառակ նշանով) | | **3642.787** | **3521.191** | **121.596** |
| | այդ թվում՝ | | | | |
| 8100 | Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160), (տող 8010 - տող 8200) | | 3642.787 | 3521.191 | 121.596 |
| 8160 | *2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող8161+տող8170+տող8190-տող8197+տող8198+տող8199)* | | **3642.787** | **3521.191** | **121.596** |
| | այդ թվում՝ | | | | |
| 8161 | 2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն (տող 8162+ տող 8163 + տող 8164) | | | X | |
| | որից՝ | | | | |
| 8190 | 2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8194-տող 8193) | | **3642.787** | **3521.191** | **121.596** |
| | այդ թվում՝ | | | | |
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ | 9320 | 3521.191 | 3521.191 | X |
| | որից՝ | | | | |
| 8192 | *- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝ առկա պարտավորությունների կատարմանը* | | 3521.191 | 3521.191 | X |
| 8194 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ (տող 8195 + տող 8196) | 9330 | 121.596 | X | 121.596 |
| | որից՝ | | | | |
| 8195 | *- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի* | | 121.596 | X | 121.596 |

## ՀԱՏՎԱԾ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| Տողի NN | *Բաժին* | *Խումբ* | *Դաս* | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | *X* | *X* | *X* | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | **5442.787** | **5321.191** | **121.596** |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) | **3931.031** | **3931.031** | **0.000** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | 3931.031 | 3931.031 | 0.000 |
| | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 3931.031 | 3931.031 | *0.000* |
| | | | | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 3931.031 | 3931.031 | |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980) | **121.596** | **0.000** | **121.596** |
| 2910 | 09 | 1 | 1 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | 121.596 | 0.000 | 121.596 |
| | | | | Նախադպրոցական կրթություն | 121.596 | 0.000 | 121.596 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 121.596 | | 121.596 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | **1390.160** | **1390.160** | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | 1390.160 | 1390.160 | |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 1390.160 | 1390.160 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, www.qajaran@mail.am

# ՈՐՈՇՈՒՄ N 4 -Ա

**27 հունվարի 2017թվականի**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ- 10 „դեմ- չկա ձեռնպահ-չկա ,*ՈՐՈՇՈՒՄ Է*.-

Հաստատել Քաջարան քաղաքային համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի սեփականության ամենամյա գույքագրման ցանկը՝ ըստ հավելվածների

Աթայան Մերուժան- կողմ
Անդրեասյան Արմեն Կողմ
Առաքելյան Արայիկ- Կողմ
Առաքելյան Սասուն- Կողմ
Բաղալյան Արթուր- Կողմ
Գաբրիելյան Գոռ- Կողմ
Համբարձումյան Կարեն Կողմ
Հայրապետյան Վարուժան Կողմ
Ստեփանյան Դերենիկ Կողմ
Ստեփանյան Նարեկ Կողմ

**Համայնքի** ղեկավար Մ Փարամազյան

2017թ հունվարի 30 Քաջարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017թվականի N -5-Ա**

### ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ- 10 , դեմ-չկա, ձեռնպահ-չկա , ՈՐՈՇՈՒՄ Է՝
Բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում

1.,,Կոմունալ տնտեսություն,, ՓԲԸ-ին -444.360/ չորս հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր վաթսուն/դրամ- Քաջարան քաղաքի զոհված ազատամարտիկների ընտանիքների, միայնակ կենսաթոշակառուների, արդարադատության մեջ ոժբախտ պատահարի հետևանքով մահացածների ընտանիքների, 1-ին կարգի հաշմանդամների, պատվավոր քաղաքացիների, երկկողմ ծնողազուրկ երեխաների, 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների, միայնակ մայրերի - ջրի և կոյուղու սպասարկման գծով սահմանված արտոնությունների փոխհատուցման վարձավճարների համար

2,,Կոմունալ տնտեսություն,, ԲԲԸ-ին – 260.400/երկու հարյուր վաթսուն հազար չորս հարյուր/դրամ - Քաջարան քաղաքի զոհված ազատամարտիկների ընտանիքների, միայնակ կենսաթոշակառուների, արդարադատության մեջ ոժբախտ պատահարի հետևանքով մահացածների ընտանիքների, 1-ին կարգի հաշմանդամների, պատվավոր քաղաքացիների, երկկողմ ծնողազուրկ երեխաների, 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների, միայնակ մայրերի - աղբահանության գծով սահմանված արտոնությունների փոխհատուցման վարձավճարների համար

3,,Քաջարան,, համատիրությանը-57.288/հիսունյոթ հազար երկու հարյուր ութսունութ/դրամ- Քաջարան քաղաքի պատվավոր քաղաքացիների բնակարանների սպասարկման վարձավճարների համար

Աթայան Մերուժան- կողմ

Անդրեասյան Արմեն Կողմ

Առաքելյան Արայիկ- Կողմ

Առաքելյան Սասուն- Կողմ

Բաղալյան Արթուր- Կողմ

Գաբրիելյան Գոռ- Կողմ

Համբարձումյան Կարեն Կողմ

Հայրապետյան Վարուժան Կողմ

Ստեփանյան Դերենիկ Կողմ

Ստեփանյան Նարեկ Կողմ

Համայնքի ղեկավար Մ Փարամազյան

2017թ հունվարի 30 Քաջարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2017թ վականի N -6-Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 36-րդ մասի 2-րդ պարբերության և ,, Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ-10, դեմ- չկա ձեռնպահ-չկա , *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հիմք ընդունելով քաղաքի բնակչության ահազանգը քաղաքում թափառող շների վնասազերծման մասին, տալ համաձայնություն կնքելու համապատասխան պայմանագիր քաղաքում թափառող շների վնասազերծման համար, ապահովելով բնակչության անվտանգությունը:

| | |
|---|---|
| Աթայան Մերուժան- կողմ | Գաբրիելյան Գոռ- Կողմ |
| Անդրեասյան Արմեն Կողմ | Համբարձումյան Կարեն Կողմ |
| Առաքելյան Արայիկ- Կողմ | Հայրապետյան Վարուժան Կողմ |
| Առաքելյան Սասուն- Կողմ | Ստեփանյան Դերենիկ Կողմ |
| Բաղալյան Արթուր- Կողմ | Ստեփանյան Նարեկ Կողմ |

Համայնքի ղեկավար Մ Փարամազյան

2017թ հունվարի 30 Քաջարան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ
# ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017թ վականի N -7-Ա

## ՔԱՋԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ ապրիլի 18-ի „ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թ նոյեմբերի 29-ի թիվ 48-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,, թիվ 381-Ա հրամանով, ,,Իրավական ակտերի մասին ,,ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ- 10 , ձեռնպահ -չկա , դեմ-չկա , *որոշում է.-*

1, Քաջարանի քաղաքային համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի „ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,,թիվ 50-Ա որոշման N-2 հավելվածում կատարել փոփոխություն համաձայն N- 2 հավելվածի:

2 Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի թիվ 50-Ա որոշումը:

Աթայան Մերուժան- Կողմ

Անդրեասյան Արմեն Կողմ

Առաքելյան Արայիկ- Կողմ

Առաքելյան Սասուն- Կողմ

Բաղդայան Արթուր- Կողմ

Գաբրիելյան Գոռ- Կողմ

Համբարձումյան Կարեն Կողմ

Հայրապետյան Վարուժան Կողմ

Ստեփանյան Դերենիկ Կողմ

Ստեփանյան Նարեկ Կողմ

Համայնքի ղեկավար Մ Փարամազյան

2017թ հունվարի 30 Քաջարան

Հավելված -2
Հաստատված է
Քաջարանի քաղաքային համայնքի ավագանու
2017թ. Հունվարի 27-ի թիվ-7Ա որոշմամբ

# Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակազմի թվաքանակը՝ 50
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Հաստիքների անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/հին | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/նոր |
|---|---|---|---|---|
| 1 | Քաղաքապետ | 1 | 450,000 | 450,000 |
| 2 | Քաղաքապետի տեղակալ | 1 | 300,000 | 300,000 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 280,000 | 280,000 |
| 4 | Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ | 1 | 256,000 | 256,000 |
| 5 | Քաղաքաշինության,բնակարանային ֆոնդի շահագործման,կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետ | 1 | 256,000 | 256,000 |
| 6 | Տեղական տուրքերի և հարկերի հավաքագրման առևտրի և սպասարկումների բաժնի պետ | 1 | 256,000 | 256,000 |
| 7 | Կրթության,մշակույթի,սպորտի և սոցիալական հարցերի բաժնի պետ | 1 | 256,000 | 256,000 |
| 8 | Շրջակա միջավայրի պահպանության,առողջապահության,ծրագրերի և կանխատեսումների բաժնի պետ | 1 | 256,000 | 256,000 |
| 9 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ-աուդիտոր | 1 | 256,000 | 256,000 |
| 10 | Աշխատակազմի գլխավոր իրավաբան | 1 | 225,000 | 225,000 |
| 11 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ հաշվապահ | 1 | 225,000 | 225,000 |
| 12 | Քաղաքապետի խորհրդական | 1 | - | 256,000 |
| 13 | Քաղաքապետի խորհրդական | 1 | - | 175,000 |
| 14 | Տնտեսվար | 1 | 100,000 | 100,000 |
| 15 | Ավտովարորդ | 2 | 125,000 | 125,000 |
| 16 | Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգի Կառավարող | 1 | 140,000 | 140,000 |
| 17 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 6 | 140,000 | 140,000 |
| 18 | Սպորտ, հրահանգիչ | 1 | 115,000 | 115,000 |
| 19 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 12 | 115,000 | 115,000 |
| 20 | Ֆինանսատնտեսագիտական բաժնի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 105,000 | 105,000 |
| 21 | Համակարգչի օպերատոր | 1 | 90,000 | 90,000 |
| 22 | Գործավար քարտուղարուհի | 1 | - | 110,000 |
| 23 | Գործավար | 1 | 100,000 | 90,000 |
| 24 | Աշխատակազմի գործավար | 1 | 115,000 | 140,000 |
| 25 | Կաթսայատան բանվոր | 1 | 80,000 | 80,000 |
| 26 | Ցրիչ | 1 | 100,000 | 80,000 |
| 27 | Լուսանկարիչ | 1 | 80,000 | 100,000 |
| 28 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 80,000 | 80,000 |
| 29 | Հավաքարար | 2 | 80,000 | 80,000 |
| 30 | Օժանդակ բանվոր | 2 | 80,000 | 80,000 |
| 31 | ՔԿԱԳ բաժնի պետ | 1 | 256,000 | 256,000 |
| ընդամենը | | 50 | 4,917,000 | 5,473,000 |